ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» ապրիլի 2011թ№ 745-Ա

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով համակարգել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի համակարգում ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման, անցկացման, իրացման և վերահսկողության գործընթացը, ղեկավարվելով Հարկային ծառայության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 11[1]-րդ հոդվածի 2-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Հարկային մարմնի կողմից ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման, անցկացման և իրացման կանոնակարգը, համաձայն N1 հավելվածի,

2) ստուգումների և ուսումնասիրությունների հանձնարարագրերի, ակտերի և տեղեկանքների ձևերը, համաձայն՝ ՀԲՍ, ԱԲՍ, ՏԲՍ, ՀՄՍ, ԱՄՍ, ՏՄՍ, ՏՊՀՄՍ, ՏՊԱՄՍ, ՏՊՏՄՍ, ՀՈՒՍ, ՏՊՀՈՒՍ, ՏԱԿՈՒՍ, ԱՈչՈՒՍ, ՏՄՈՒՍ, ՀՀՍ հավելվածների,

3) ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից իրականացվող ստուգումների ընթացքում մասնագետ(ներ)ի և թարգմանիչ(ներ)ի ներգրավման ընթացակարգը, համաձայն հավելված N2,

4) Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գործունեության կասեցման ընթացակարգը՝ համաձայն հավելված N3,

5) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից հաշվարկելու վերաբերյալ որոշման օրինակելի ձև համաձայն հավելված N4,

6) «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման դեպքում պարտավորությունների առաջադրման ընթացակարգը՝ համաձայն հավելված N5,

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2011 թվականի մայիսի 1-ից:

Անցումային դրույթներ

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի օգոստոսի 8-ի «Հարկային ստուգումների ռազմավարության մասին (հարկային ստուգումների ազգային ծրագիր)» թիվ 1-06/420-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2006 թվականի հունիսի 14-ի «ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից իրականացվող ստուգումների ընթացքում մասնագետ(ներ)ի և թարգմանիչ(ներ)ի ներգրավման գործընթացը կանոնակարգելու մասին» թիվ 1-06/322-Ա հրամանները:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետին՝

ապահովել ստուգման հանձնարարագրերի և ակտերի հաշվառման ավտոմատացված համակարգի համապատասխանեցումը սույն հրամանով հաստատված ձևաթղթերին:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչության պետին՝

սույն հրամանին համապատասխան յուրաքանչյուր կիսամյակ, մինչև տվյալ կիսամյակին նախորդող ամսվա 1-ը ձևակերպել ստուգման (ուսումնասիրության) հանձնարարագրերի ձևաթղթերի պատվեր և ներկայացնել կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանում՝ դրանց տպագրման, ստացման և բաշխման գործընթացն ապահովելու նպատակով:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ
ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի
2011թ-ի ապրիլի 28-ի
N 745-Ա հրամանի
Հավելված 1-ից

12. Ըստ ստուգման տեսակների՝ հանձնարարագրեր հրապարակելու լիազորություններ ունեցող պաշտոնատար անձինք են.

№	**Ստուգման տեսակը**	**Հանձնարարագրեր (հրամաններ) հրապարակելու լիազորություններ ունեցող պաշտոնատար անձը (անձինք)**
1	Բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում (կրճատ՝ ԲՍ),	Հարկային մարմնի ղեկավար
2	*Ուժը կորցրած է ճանաչվել*	
3	*Ուժը կորցրած է ճանաչվել*	
4	Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում (կրճատ՝ ՉԱ),	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
5	Ակցիզային դրոշմանիշերի կիրառման ճշտության ստուգում (կրճատ՝ Ակ),	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
6	Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում (կրճատ՝ ՀԴՄ),	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
7	Օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում (կրճատ՝ ԵՍ),	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
8	*Ուժը կորցրած է ճանաչվել*	
9	*Ուժը կորցրած է ճանաչվել*	
10	*Ուժը կորցրած է ճանաչվել*	
11	Հարկ վճարողների կողմից «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «թ» կետով սահմանված	Հարկային մարմնի ղեկավար

	հայտարարության փակցման եւ դրանում պահանջվող տեղեկությունների ներառման ճշտության ստուգում (կրճատ՝ 15թ),	
12	*Ուժը կորցրած է ճանաչվել*	
13	Հանդիպակաց ստուգում (կրճատ՝ ՀՍ)	Հարկային մարմնի ղեկավար
14	Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում (կրճատ՝ ԴՍ)	Հարկային մարմնի ղեկավար, հարկային (տարածքային) տեսչության պետ

13. Ըստ ուսումնասիրության տեսակների՝ հանձնարարագրեր հրապարակելու լիազորություններ ունեցող պաշտոնատար անձինք են.

№	**Ուսումնասիրության տեսակը**	**Հանձնարարագրեր (հրամաններ) հրապարակելու լիազորություններ ունեցող պաշտոնատար անձը (անձինք)**
1	Հսկիչ գնումների իրականացման ուսումնասիրություն	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
2	Հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության, օրենքով սահմանված կարգով ներկայացվող տեղեկությունների ճշտության արձանագրման նպատակով ուսումնասիրություն	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
3	Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձված հարկի գումարը վերադարձնելու նպատակով հարկային մարմնի կողմից ուսումնասիրություն	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
4	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու նպատակով ուսումնասիրություն	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
5	Տնտեսավարող սուբյեկտների մոտ արտադրանքի արտադրության, օգտակար	Հարկային մարմնի ղեկավար

	հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, պատրաստի արտադրանքի, ապրանքների պակասորդի, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրման նպատակով ուսումնասիրություն	
6	Ակցիզային դրոշմանիշերի շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, արտադրական կարողությունների ուսումնասիրություն	Հարկային մարմնի ղեկավար, Հարկային (տարածքային) տեսչության պետ
7	*Ուժը կորցրած է ճանաչվել*	
8	*Ուժը կորցրած է ճանաչվել*	